ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՅԱԿՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.[**]

Հետխորհրդային Հայաստանից բնակչության արտագաղթի և արտերկրում նոր սփյուռքի ձևավորման հետևանքով միգրանտները սոցիալական ցանցերի միջոցով ծագման երկրում շարունակում են պահպանել իրենց կապերն ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների ու ծանոթների հետ: Նրանք, ընդգրկվելով մեկից ավելի հասարակությունների ինստիտուցիոնալ կառույցներում, միաժամանակ կրում են տարբեր հասարակությունների մշակութային արժեքներ[1]: Միգրանտները և նրանց ընտանիքները, մշտական բնակություն հաստատելով այլ երկրներում և դառնալով այլ երկրի քաղաքացիներ, երբեմն գերակայությունը տալիս են հայրենիքում հուղարկավորմանը: Մշակութաբանական առումով այդ երևույթը քիչ ուշադրության են արժանացրել հետազոտողները, մինչդեռ այն մի կողմից առնչվում է միգրանտի էթնիկ ինքնության՝ այդ տոհմին, ազգին շարունակական մաս կազմելու երևույթի հետ, մյուս կողմից՝ էթնիկ խորհրդանիշների, տվյալ դեպքում՝ հայրենի սրբազան հողի և այնտեղ ննջելու մղումների հետ: Հայ ժողովրդի պատկերացումներում հողն օժտված է հոգևոր մի շարք հատկություններով և համարվում է հայրենասիրության աղբյուր: Այն կորցրածները կսկիծով են հիշում. «Արզրում, հողիտ ու ջրիտ մեռնիմ..., պիտի ըլլի օր մե օրմ՝ գամ, հողտ լիզեմ ...Շատ հիվանդներ

[**] ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, akoonk@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 11.01.2019, գրախոսման օրը՝ 15.05.2019:

[1] **Кайзер М., Бредникова Ол.** Транснационализм и транслокальность (комментарии к терминологии) (Миграция и национальное государство/Под ред. Бараулиной Т. и Карпенко О., СПб., 2004, с. 133-146).

պանդխտութեան մեջ իրենց գյուղի ջրից բերել են տալիս և խմում»[2]: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտերկրում աշխատող միգրանտների մահվան դեպքում Հայաստանում հուղարկավորելու երևույթը տարածված է եղել ինչպես խորհրդային, այնպես է հետխորհրդային ժամանակահատվածում, ընդ որում ոչ միայն դրսում աշխատող կամ բնակություն հաստատած հայերի, այլև Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում: Հետխորհրդային Հայաստանում դրսից միգրանտների հուղարկավորման ցուցանիշները բարձր են եղել մինչև 2000-ական թվականների սկիզբը, երբ նրանց ընտանիքների մեծ մասը դեռևս հանրապետությունում էր, իսկ հետագայում՝ վերամիավորումից, ինչպես նաև ընդունող երկրներում հաստատվելուց և այնտեղ նոր գերեզմանոցներ հիմնադրելուց հետո, նրանց թիվը կրճատվեց:

Հիմնախնդրի վերլուծության համար կարևորվել է հետազոտական այն հարցը, թե հայրենիքում հուղարկավորվելու հանգամանքը արդյո՞ք միայն պայմանավորված է ննջեցյալի ինքնության խնդիրներով, թե՞ այդ հարցում կարևորվում է նաև հարազատների, համայնքի անդամների կողմից նրանց շիրմին այցելությունների, հիշողության և «սգի կառուցակցման» միջոցով նրանց «ապրեցնելու» և մոռացության չմատնելու հանգամանքը: Տեսական առումով այդ հարցերն առնչվում են միգրանտի էթնիկ ինքնության խնդրի և այդ հանրույթին մաս կազմելու գիտակցություն հետ: Էթնիկ ինքնությունը ներառում է կայուն իմաստներ, որոնք վերաբերում են էթնիկ խմբին անհատի նմանության, անդամակցելու և մյուսներից տարբերվելու բնութագրերին: Մյուս հանրույթներից էթնոտարբերակիչ հատկանիշների հիմքն են լեզուն, արժեքներն ու նորմերը, պատմական հիշողությունը, կրոնը, ընդհանուր նախնիների մասին առասպելը, ազգային բնավորությունը և այլն[3]: Էթնիկ ինքնության խնդրին առնչվող տեսություններն անդրադառնում են նաև այդ երևույթը բնութագրող մի շարք գործոնների՝ ծնողների ծագում, լեզու, մշակույթ, ծննդավայր: Էթնիկ ինքնությունը կենտրոնացած է մշակույթի ու անցյալի ուղղությամբ և ավելի շատ առնչվում է դիցաբանությանը: Դրա ձևավորման համար շատ կարևոր է նաև էթնիկ

---

[2] **Լալայեան Ե.,** Ջավախք, Ազգագրական հանդես, Ջավախք, Թիֆլիս 1896, գիրք Ա, էջ 350:

[3] **Гумилев Л.Н.** Этногенез и биосфера Земли, М., 2002, հասանելի է http://www.bimbad.ru/docs/gumiljov_lev_ethnogenesis.pdf (12.02.2018).

խորհրդանիշների առկայությունը: Անշուշտ, նշված մոտեցումները, որոնք պահպանվել են միգրանտների շրջանում, կարող են մոտիվացնել հայրենիքում հուղարկավորվելու ցանկությունը: Մյուս տեսական հիմքը, որի շրջանակներում կարևորվել է հոդվածում տեղ գտած նյութերի քննարկումը, Ժակ Դերիդայի այն մոտեցումն է, ըստ որի՝ սուգը մեկնաբանվում է որպես մահացածներին «ապրեցնելու» կոնստրուկտ և ցանկություն, նրանց անընդհատ «կենդանացնելու» փորձ, հիշողություն և պարտականություն[4]: Հայրենիքում հիմնված ընտանեկան գերեզմանոցը այն վայրն է, որտեղ մահացածներին տարբեր առիթներով պարտադիր այցելում են հարազատները, համայնքի անդամները և ննջեցյալների հետ կապված ծեսերի, սգի վերարտադրման և հիշողությունների միջոցով «կենդանացնում» և «ապրեցնում» են նրանց: Այսինքն՝ համայնքը, հարազատները տարբեր առիթներով գերեզմանոց այցելությունների միջոցով ապրեցնում են նրա հիշատակը: Այս հանգամանքը կարող է դառնալ կարևոր շարժառիթ ննջեցյալին հայրենիքում հուղարկավորելու համար:

Որպես հետազոտության օբյեկտ՝ ընտրված են խորհրդային և հետխորհրդային շրջանում նախկին ԽՍՀՄ տարածքում աշխատանքային միգրացիայի մեկնած կամ բնակություն հաստատած և հայրենիքում հուղարկավորված միգրանտները և նրանց ընտանիքները:

Մահացած միգրանտների վերաբերյալ տվյալները հավաքվել են 1980-2018 թթ. Հայաստանի 8 մարզերի 6 քաղաքային և 41 գյուղական համայնքներում: Համակողմանի և բովանդակային տեղեկատվության նպատակով կիրառվել և համադրվել են հետևյալ մեթոդները.

1) **փորձագիտական հարցման մեթոդ.** հուղարկավորված միգրանտների, նրանց մահվան պատճառների, տարիքային կազմի և այլ հարցերի վերաբերյալ տվյալներ են հավաքվել 47 համայնքի ղեկավարների և պատասխանատուների շրջանում.

2) **խորին հարցազրույցի մեթոդ.** Հայաստանում հուղարկավորված միգրանտների ընտանիքի անդամների հետ իրականացվել է 12 խորացված հարցազրույց.

3) **փաստաթղթերի վերլուծության մեթոդ.** ուսումնասիրվել են այդ համայնքների գյուղապետարաններում պահվող հաշվառման/ծխական

[4] **Деррида Ж.** Призраки Маркса (перевод с французского Б. Скуратова), М., 2006, с. 8-12.

մատյանները. ըստ այդմ՝ հավաքվել են միգրանտների ընտանիքների կազմի, քանակի և մահացած միգրանտների վերաբերյալ վիճակագրական տվյալներ.

4) **դիտարկման մեթոդ.** դիտարկումներ են իրականացվել 7 համայնքների գերեզմանոցներում, և գրառվել են միգրանտների գերեզմանաքարերի գրառումները:

Նշված համայնքների ղեկավարների պատասխանատուներից և ծխական մատյաններից հավաքված տվյալները փաստում են դրսում մահացած և Հայաստանում հուղարկավորված 59 դեպք. հիմնականում դրանք շինարարությունում դժբախտ պատահարների արդյունք են: Այդ դեպքերի 22%-ը վերաբերում է խորհրդային շրջանում արտագնա աշխատանքի մեկնածներին: Նրանք հիմնականում երիտասարդներ էին և 21-35 տարեկան: Մահվան դեպքերի 78%-ը տեղի է ունեցել հետխորհրդային շրջանում, որից 40%-ը միջին հաշվով ՌԴ-ում բնակվել է մինչև 10 տարի և ունեցել է քաղաքացու կարգավիճակ, իսկ մնացածը արտերկիր մեկնել էր աշխատանքի նպատակով. նրանց մահը արտագնա աշխատանքի վայրում պատճառաբանվել է որպես «դժբախտ պատահարի արդյունք»: Ըստ տարիքային կազմի՝ հետխորհրդային շրջանում մահացածների 47%-ը մինչև 29 տ. երիտասարդներ էին, 33%-ը՝ 30-49 տ., իսկ 20%-ը պատկանում էր 50 և բարձր տարիքային խմբին: Նշված վիճակագրական տվյալները մտահոգիչ են այն առումով, որ օտար միջավայրում գերակշռող մասը եղել է աշխատունակ և ակտիվ վերարտադրողական տարիքում: Ըստ սեռի՝ Հայաստանում 46 հուղարկավորվածներից միայն 15%-ն էր կին: Հուղարկավորվածների 60%-ը ՌԴ-ում եղել է ընտանիքի հետ: Նրանց միայն 29%-ը Հայաստանում չուներ հարազատներ, սակայն այդ բնակավայրը համարվում էր իր ծննդավայրը: Հայաստանում հուղարկավորված դեպքերի 60%-ը եղել է մինչև 2010 թվականը, իսկ մնացածը՝ 2011-2016 թթ.: Վիճակագրական այս տվյալները փաստում են վերջին տարիներին մահացածներին Հայաստանում հուղարկավորելու միտումները, որոնք, մեր կարծիքով, պայմանավորված է այդ ընտանիքների նյութական վիճակով և դրսում նոր գերեզմանատներ հիմնելու հանգամանքով: Ըստ պատճառների՝ նրանց 27%-ը մահացել էր բնական մահով, իսկ մնացածը որակվել է որպես «դժբախտ պատահար»:

Միգրանտին հայրենիքում հուղարկավորելու որոշումը պայմանավորված է ինչպես մահացողի կամ ընտանիքի ցանկությամբ, այնպես էլ այդ ընտանիքի տնտեսական վիճակով, քանի որ հանգուցյալին Հայաստան տեղափոխելու համար պահանջվում են որոշակի ֆինանսական միջոցներ, ժամանակ և իրավական ընթացակարգեր: Ըստ հետազոտության՝ հայրենիքում հուղարկավորելու խնդիրը քննարկման առարկա է դառնում նաև համայնքներում. ըստ այդմ՝ կարևորվում են «մայր» և «օտար» հողի խորհրդի, հայրենիքում հուղարկավորվելու դեպքում՝ «հայ մնալու», իսկ օտար տեղում՝ «հայությունը կորցնելու», օտար միջավայրում «անտեր», իսկ հայրենիքում «տիրով» գերեզման դառնալու, «ընտանեկան» գերեզմանոցում հուղարկավորվելու դեպքում նախնիների հետ կապի և մշտապես հիշելու, իսկ օտար միջավայրում նրան շուտ մոռանալու հարցերը: Այդ առումով մեջբերենք հարցազրույցի մասնակիցների մի քանի տեսակետներ, որոնք հավաքվել են Հայաստանի տարբեր մարզերում. «Ամբողջ կյանքը դրսում ա ապրել, էդքան տարի ոչ մի անգամ գյուղ չի եկել, ոչ մեկի մեռլին չի մասնակցել, գյուղի համար ոչ մի լավ բան չի արել, հիմա բերել են, որ գյուղում թաղեն: Էսենց որ գնա, գյուղը իրենց համար կվերածվի գերեզմանոցի» (տղամարդ, 60 տ.)[5]: «Ընտանիքը թողել, գնացել էր, էնդեղ կապվել էր ուրիշ կնոջ հետ: Ռուսաստանում մահանալուց հետո, տղաները իրենց նամուսի համար բերեցին էստեղ թաղեցին» (կին, 66 տ.)[6]: «Էստեղ ծնվել մեծացել է, ունի պապենական գերեզմանոց: Վերջին տարիներին ապրում է դրսում: Ճիշտ են անում, որ բերում են իր հարազատների մոտ են թաղում, հո դրսում օտար տեղ չեն թաղելու» (կին, 47 տ.)[7]: Հարցման մասնակիցները այդ հարցում կարևորում են մահացածի բարոյական կերպարը, մահվան հանգամանքները, սեռը, տարիքը, համայնքից հեռանալու ժամկետները և համայնքի հետ կապերը, համայնքում այդ տոհմի հեղինակությունը և հարազատների առկայությունը: Բայց որոշ մասն էլ այն կարծիքին է, որ եթե ցանկանում են հուղարկավորել հայրենի հողում, անկախ որևէ հանգամանքից, խոչընդոտներ չպետք է ստեղծել և առաջնորդվել քրիստոնեական բարոյականության սկզբունքով: Այդպիսի հուղարկավո-

[5] **Գալստյան Մ.,** Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Գեղարքունիքի մարզ, 2007:

[6] **Գալստյան Մ.,** ԴԱՆ, Շիրակի մարզ, 2007:

[7] **Գալստյան Մ.,** ԴԱՆ, Լոռու մարզ, 2011:

ությունններին համայնքներում մասնակցության հարցը երբեմն պայմանավորվում է նաև ննջեցյալի սոցիալական և տնտեսական կարգավիճակով: Եթե ննջեցյալի ընտանիքը դրսում ունի նյութական լայն հնարավորություններ, հայրենիքում հուղարկավորության ժամանակ հարազատները համայնքի դրամական օգնությունից ձեռնպահ են մնում՝ ամբողջ ֆինանսական ծախսերը վերցնելով իրենց վրա: Սակայն, ընդհակառակը, եթե ննջեցյալի ընտանիքը նյութական վատ վիճակում է, ապա արարողությունները կատարելու համար համայնքի անդամները գումար են հավաքում: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ հուղարկավորություններին համայնքի անդամների մասնակցության թիվը ավելի քիչ է, քան տեղացիների: Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկում ազգակից ընտանիքները ամբողջովին համայնքից արտագաղթելու պատճառով ննջեցյալին օդանավակայանից տեղափոխել են գերեզմանոց և փոքրաթիվ մարդկանցով կատարել հուղարկավորությունը: Ննջեցյալի տեղափոխման ծախսերի և հուղարկավորման համար դրամական օգնություն են ցուցաբերում նաև արտերկրի հայկական համայնքները, հատկապես ազգակիցները և բարեկամները: Այսպես, օրինակ, 2000-ական թթ. ՌԴ-ից երեք մարդու են հուղարկավորել Տավուշի մարզի Ծաղկավան, 2007 թ.՝ մեկին, 2011 թ.՝ երեքին Այգեհովիտ գյուղում. ընդ որում՝ գումարի կեսը ազգականներն են հավաքել, մյուս մասը՝ Ռուսաստանում բնակվող ընկերները: 2008 թ. ամռանը ավտովթարի պատճառով զոհվել է Մոսկվայում բնակվող մի իջևանյան ընտանիք՝ մայրը, 16 և 18 տարեկան երկու աղջիկները: Մոսկվայում բնակվող նախկին տավուշցիների ֆինանսական աջակցությամբ նրանց բերել և թաղել են Իջևանում, ընդ որում՝ երկու աղջիկներին էլ՝ հարսանեկան զգեստով[8]: Դժբախտ պատահարների հետևանքով մահացած արտագնացին հայրենիք տեղափոխելու և հուղարկավորելու ծախսերը բրիգադի կողմից հոգալու պրակտիկան տարածված էր նաև խորհրդային շրջանում: Խորհրդային շրջանում, կապված մահվան հանգամանքների, հաղորդակցման դժվարությունների և սանիտարահիգիենիկ անվտանգության հետ, ննջեցյալին հիմնականում հայրենիք էին տեղափոխում ցինկե փակ դագաղով: Այդ երևույթը նորույթ էր Հայաստանի գյուղական համայնքների համար, և հարցազրույցների ժամանակ նրանց հարազատները հաճախ էին նշում,

[8] **Վարդանյան Լ.,** Տավուշցիների ընտանեկան ծիսակարգը, Տավուշ, սոցիալ-մշակութային գործընթացներ, Ե., 2014, էջ 215:

որ արտագնացության միջոցով են նրանք ծանոթացել այդ երևույթին[9]: Երբեմն որպեսզի հարազատները համոզված լինեն, որ դրսից բերվածը իրենց ննջեցյալն է, օրինակ, Լոռու մարզի համայնքներից մեկում փակ ցինկե դագաղի կափարիչի վրա բացված է եղել փոքր պատուհան: Որոշակի տարբերություններ են դիտարկվել նաև դրսից ուղարկվող ննջեցյալի դագաղի կառուցվածքի, չափերի, ձևավորման, խաչի ձևի և այլ պարագաների միջև: Օրինակ, դագաղի հետ երբեմն հարազատները, ընկերները ուղարկում են նաև արհեստական ծաղկեպսակ, որի վերևի մասին ամրացված է լինում նաև խաչ: Սոցիալ-մշակութային այդ առանձնահատկությունները կապված են այն միջավայրի հետ, որտեղից տեղափոխում են ննջեցյալին: Այդ պարագաների ընտրությունը պայմանավորված է նաև մահացածի սոցիալ-նյութական կարգավիճակով: Հայաստանում հուղարկավորելու խնդիրը առկա է նաև ազգային փոքրամասնությունների մեջ: Այսպես՝ եզդիաբնակ Շամիրամ, Ակնալիճ, Զարթոնք համայնքներում կարևորել են հայրենի բնակավայրում հարազատներին հուղարկավորվելու գաղափարը և վերջին երեք տարիներին Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Ֆրանսիայից 6 հանգուցյալ են բերել և հուղարկավորել տոհմական գերեզմանոցում: Եզդի և քուրդ միգրանտների համար հանգուցյալների շիրիմներին այցելությունները և նախնիների հիշատակման արարողությունները համարվում են էթնիկ ինքնության և հայրենիքի հետ կապերը պահպանելու, ինչպես նաև ազգակիցների և դրացիների հետ շփվելու կարևոր բաղադրիչ: Եզդիների տոնացույցում գոյություն ունի «Ռոժա Մազալան»՝ գերեզմանի օր ավանդույթը, որը նշվում է յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին[10]: Այդ օրը արտերկրում ապրող եզդիների որոշ մասը, որ ունի հնարավորություն, այցելում է Հայաստան՝ հարազատների գերեզմանին: Մյուս հիշարժան տոնը, որին Հայաստանում մասնակցում է արտերկրի միգրանտների որոշ մասը, սրբավայրի հիշատակման օրն է (Կվա-եզիդի): Հայաստանում հարազատներին հուղարկավորելու, հարազատների ննջեցյալների գերեզմանոցներին այցելությունները տարածված են նաև արտերկրում բնակություն հաստատած հույների և ասորիների մեջ: Նշենք նաև, որ վերը

---

[9] **Գալստյան Մ.,** Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, N 26, էջ 71:

[10] Եզդիաբնակ գյուղերում այդ տոնը նշվում է տարբեր օրերի:

նշված ազգային փոքրամասնությունների շրջանում վերջին տարիներին այդ հարցում նույնպես արձանագրվել են նվազման միտումներ: Դա պայմանավորված է ոչ միայն ֆինանսական դժվարություններով. նշված ազգային փոքրամասնությունները մուտքի երկրների իրենց հավաք բնակավայրերում հիմնել են նոր գերեզմանոցներ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Յարոսլավլի մարզում եզդիները մեծ համայնք են: Նրանք տեղում հիմնադրել են նաև գերեզմանոց, որը կոչվում է Մալաեզդիա (եզդիների տուն): Ասորիները Կրասնոդարում և Ռոստովում հիմնել են գերեզմանոց և այդ տարածաշրջանից մահացածների աճյունը Հայաստան տեղափոխում են միայն ծայրահեղ դեպքերում[11]:

Աշխատանքային միգրանտների ընտանիքներում առկա է նաև կենոտաֆ թաղման ծեսը: Թաղման այդ ծեսը տարածված է եղել դեռևս ուշբրոնզեդարյան Հայաստանում[12]: Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերի մի քանի համայնքների գերեզմանոցներում դիտարկման ժամանակ մեզ պատմեցին երեք այդպիսի դեպք. հարազատները կենոտաֆ գերեզմանաքար էին դրել Երկրորդ համաշխարհային պատերազմում դրսում զոհված երկու զինվորի համար[13], իսկ մյուսը՝ դրսում մահացած աշխատանքային միգրանտի համար: Աշխատանքային միգրանտի կենոտաֆ թաղումը տեղի է ունեցել 1990-ական թվականներին Գեղարքունիքի մարզում. ՌԴ-ում մահացածի կինը և եղբայրները նրա հայրական գերեզմանոցում կանգնեցրել են նկարով գերեզմանաքար՝ այնտեղ ամփոփելով նրա

---

[11] **Գալստյան Մ.,** Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Ե., 2015, էջ 116-117:

[12] «Կենոտաֆ» բառը փոխառություն է հունարենից, որը նշանակում է դատարկ դամբան, այսինքն՝ աճյուն չպարունակող դամբարան, որը կառուցվում էր այն դեպքում, երբ մահացածի դիակն անմատչելի էր թաղման համար: Տե՛ս **Թումանյան Գ.,** Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 2007, N 1, էջ 138-152):

[13] Գյումրու հ. մեկ գերեզմանոցում կենոտաֆ թաղում է կատարվել Միրոյանների կրտսեր որդու՝ Զարզանդի համար, որը Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվել և թաղվել էր Վիտեբսկի շրջանի գյուղերից մեկի եղբայրական գերեզմանոցում (այնտեղ թաղված է մոտ 150 խորհրդային զինվոր): Միրոյանների կրտսեր դուստրը՝ Շուշանիկը, երկրաշարժից հետո՝ 1990 թ., այցելել է Վիտեբսկի եղբայրական գերեզման և այնտեղից մի շիշ հող է բերել և, ծնողների հողաթմբերի միջև թաղելով, պատրաստել է երրորդ թումբը (տեղեկությունը տրամադրել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի գիտաշխատող Ինգա Ավագյանը):

հանդերձանքը և այլ մասունքներ (կին, 57 տ.)[14]: Հատկապես շատ են այն օրինակները, երբ տոհմական գերեզմանոցում դրսում մահացածի համար գերեզմանաքար չի դրվում, սակայն հարազատների մոտ թաղում են այնտեղից բերված շշով հող և այլ մասունքներ: ՌԴ Սևաստոպոլ քաղաքում ուղղափառ եկեղեցու արարողակարգով հուղարկավորել են միգրանտին, որին մասնակցել են նաև Հայաստանի հարազատները: Իսկ հարազատները վերադառնալուց հետո իրենց համայնքում ննջեցյալի համար կատարել են հոգեհանգստի արարողություն՝ այնտեղից բերված հողը թաղելով հայրական գերեզմանոցում (տղամարդ, 63 տ.)[15]: Կենոտաֆ թաղման ծեսը փաստում է մի կողմից՝ ընտանիքի հետ նրա «վերամիավորման», նախնիների հետ կապի, մյուս կողմից՝ սերնդեսերունդ նրան հիշելու միջոցով «ապրեցնելու» խնդիրը:

Միգրանտների և ոչ միգրանտների գերեզմանաքարերի միջև էական տարբերություն չկա: Տարբերություններ են դիտարկվել միայն դրանց վրայի գրությունների բովանդակություններում՝ կապված միգրանտ հանգուցյալի տարիքի, մասնագիտության և մահվան պատճառների հետ: Օրինակ՝ Շիրակի մարզի գյուղական համայնքներից մեկում գերեզմանաքարի վրա պատկերված է այն ավտոմեքենան, որով աշխատանքի ժամանակ Ռուսաստանում վթարի էր ենթարկվել միգրանտը: Նշված են նաև հարազատի ողբը, ափսոսանքը և կարոտը, ինչպես նաև պանդխտություն երևույթի վերաբերյալ դատապարտող խոսքեր: Դրսում հուղարկավորվածի տապանաքարերի վրա հաճախ է նշվում «Գնաց հայրենիքի կարոտով» արտահայտությունը: Բացի հանգուցյալի պատկերի դրոշմումից՝ գրվում է նաև, թե ում կողմից է այդ գերեզմանաքարը: Որոշ գերեզմանաքարերի մոտ հանդիպում ենք նաև արհեստական ծաղկեպսակների[16]: Այսպիսով, հայրենիքում հուղարկավորելը կապված է երկու խումբ գործոնների հետ.

1) միգրանտի ինքնության խնդիրներն են, մասնավորապես հայրենի հողում հուղարկավորելու ցանկությունը՝ որպես էթնիկ ինքնության պահպանման կարևոր միջոց: Մինչդեռ, ըստ հարցվածների, օտար հողում հուղարկավորությունը ենթադրում է ինքնության կորուստ, «տեր չունեցող», «օտար» գերեզմանի վերածվելու վտանգ: Հարցվածների կարծիքով, տոհ-

[14] **Գալստյան Մ.,** ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 1993:
[15] **Գալստյան Մ.,** ԴԱՆ, Կոտայքի մարզ, 2018:
[16] **Բոյան Վ.,** ԴԱՆ, Շիրակի մարզ, 2018:

մական գերեզմանոցում հուղարկավորվելու միջոցով նրանք ոչ միայն շարունակում են պահպանել նախնիների հետ կապը, այլև շեշտվում է հանդերձյալ աշխարհում մահացած ծնողների կամ ամուսնու/կնոջ հետ «ընտանիքի վերամիավորման» և երկատված չմնալու հանգամանքը՝ որպես սոցիալական ինքնության դրսևորում: Այդ հանգամանքը հարցվածները պայմանավորել են նաև Հայաստանում հուղարկավորման միջոցով հայրենիքի հետ սերունդների հետագա կապի պահպանման փաստով՝ որպես ազգային արժեքների փոխանցման միջոց, իսկ Հայ առաքելական եկեղեցու կարգի համաձայն հուղարկավորումը՝ որպես կրոնական ինքնության պահպանման դրսևորում.

2) սգի միջոցով հայրենիքում մահացածներին «ապրեցնելու» հանգամանքը: Ըստ հարցման մասնակիցների՝ ընտանիքը, հարազատները, համայնքի անդամներն ունեն պարտականություններ մահացածների հանդեպ և չընդհատվող հիշողություն: Մինչդեռ հուղարկավորելով օտար հողում՝ կարող է չպահպանվել կամ ընդհատվել ննջեցյալների մասին հիշողությունը: Հարցման մասնակիցների դիրքորոշմամբ՝ միգրանտին հուղարկավորելով հայրենիքում՝ նրանք, ազգային սովորույթների համաձայն, պահպանում և կատարում են բոլոր ծեսերը՝ թաղում, հոգեհաց, յոթ, քառասունք, տարի, հիշատակի օրեր և մեռելոցներ, սգում են ննջեցյալի համար և սգի միջոցով «վերապրեցնում և վերակենդանացնում» նրանց: Այդ երևույթը կատարվում է նաև առօրյա կյանքում նրանց անընդհատ հիշելու միջոցով: Ըստ հարցվածների՝ հայրենիքում ննջեցյալները դառնում են իրենց ինքնության մի մասը և համայնքային կյանքի մասնակիցներ: Այս հանգամանքն ընտանիքի անդամների համար դառնում է հարազատին հայրենիքում հուղարկավորելու կարևոր շարժառիթ, և երբեմն երկրորդ պլան են մղվում ինքնության խնդիրները:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.

Ամփոփում

Միգրանտները և նրանց ընտանիքները, մշտական բնակություն հաստատելով այլ երկրներում, գերադասում են հուղարկավորվել հայրենիքում: Այդ հիմնախնդիրը քննարկվում է էթնիկ ինքնության և հետկառուցվածքաբանության տեսությունների շրջանակներում: Հարցման արդյունքներով հայրենի հողում հուղարկավորվելու ցանկությունը նրանք ոչ միայն համարում են էթնիկ ինքնության պահպանման, այլև նախնիների հետ կապի, «ընտանիքի հետ վերամիավորման» կարևոր միջոց: Ըստ հարցման մասնակիցների՝ ընտանիքը, հարազատները, համայնքի անդամներն ունեն պարտականություններ մահացածների հանդեպ և անընդհատ պահպանվող հիշողություն, որը երբեմն բացակայում է օտար հողում հուղարկավորելու դեպքում: Հայրենիքում պահպանում և կատարում են ննջեցյալին նվիրված բոլոր ծեսերը՝ «վերապրեցնելով» նրա հիշատակը: Աշխատանքային միգրանտների ընտանիքներում առկա է նաև կենոտաֆ թաղման ծեսը:

Բանալի բառեր՝ միգրանտ, հուղարկավորություն, հայրենիք, էթնիկ ինքնություն, հիշողություն, սգի կառուցակցում, կենոտաֆ թաղում:

ПОГРЕБЕНИЕ МИГРАНТОВ В АРМЕНИИ: ВОПРОСЫ САМОБЫТНОСТИ И КОНСТРУКТИВИЗМА ТРАУРА

ГАЛСТЯН М.В.

Резюме

Мигранты и их семьи, обосновавшись в других странах, предпочитают быть погребенными на Родине. Эта проблема рассматривается в рамках этнической самобытности и теории постконструктивизма. По результа-

там опроса они считают желание быть погребенными в родной земле не только важным средством сохранения этнической идентичности, но и средством “сохранения” связи с предками, “воссоединения с семьей”. Согласно ответам участников опроса, семья, родственники, члены общины имеют обязательства перед усопшими в плане почитания их памяти, что, зачастую, не имеет место при погребении в чужой земле. На Родине соблюдаются и проводятся все посвященные усопшему церемонии. В семьях трудовых мигрантов имеет место также церемония похорон “кенотаф”.

Ключевые слова – мигрант, погребение (похороны), Родина, этническая идентичность, память, конструктивизм траура, церемония похорон “кенотаф”.

MIGRANT’S FUNERAL IN ARMENIA: ISSUES OF IDENTITY AND MOURNING CONSTRUCTION

M. GALSTYAN

Abstract

Migrants and their families, establishing permanent residence in other countries, give priority to burial in their homeland. This problem is discussed within the framework of ethnic identity and post-constructivism theories. According to the results of the survey, the desire to be buried in their homeland is being considered not only as a means of ethnic identity preservation, but also signifies connection with their ancestors, and "reunion with the family". According to the survey participants, family, relatives, community members have memory and responsibilities towards the deceased. The latter could be missed if the burial takes place abroad. In the homeland all the rituals dedicated to the deceased are preserved, thus "rescuing" the memory. Therefore, those buried in the homeland become part of the identity of their relatives. The families of migrant workers also have a ritual of cenotaph burial.

Key words – migrant, funeral, homeland, ethnic identity, memory, mourning construction, cenotaph burial.